ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/Հ	Ոլորտ	2022թ. /հազ. դրամ/	2023թ. /հազ. դրամ/
1	Բնակարանային ապահովում	2 748 187,0	3 600 000,0
2	Կրթական, մշակութային և մարզական օբյեկտների շինարարություն	2 430 401,0	3 106 288,0
3	Ճանապարհաշինություն	7 867 948,4	10 100 000,0
4	Մասնավոր ներդրումներ	1 438 862,8	2 050 000,0
5	Նախագծային աշխատանքներ	187 190,0	196 205,5
6	Անհետաձգելի համարվող կապիտալ բնույթի ծրագրեր	531 029,0	609 249,0
	Ընդամենը	15 203 618,20	

ՀՀ Շիրակի մարզում քաղաքաշինության ոլորտում իրականացվելու են 9 միլիարդ 561 միլիոն 743 հազար դրամ գումարի աշխատանքներ

- Բնակարանաշինություն- 3 միլիարդ 600 միլիոն դրամ
- Կրթական, մշակութային և մարզական օբյեկտների շինարարություն – 3 միլիարդ 106 միլիոն 288 հազար դրամ
- Մասնավոր ներդրումներ – 2 միլիարդ 50 միլիոն դրամ
- Նախագծային աշխատանքներ -196 միլիոն 206 հազար դրամ
- Անհետաձգելի համարվող կապիտալ բնույթի ծրագրեր-609 միլիոն 249 հազար դրամ:

1. Բնակարանաշինություն - 4 բնակելի համալիրների կառուցում շուրջ 507 բնակարաններով – Ներդրումների ծավալը շուրջ 3 միլիարդ 600 միլիոն դրամ է

➢ «Հայաստան» համահայկական հիմնադրամի պատվիրատվությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Մուշ-2» թաղամասում 9 հարկանի 2 բնակելի շենքերով համալիրի կառուցում – 50 բնակարան՝ 2023 թվականին իրականացվել են շուրջ 1 միլիարդ դրամի աշխատանքներ: Շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են: Ավարտը՝ 2024 թվական ծրագրի ընդհանուր գումարը կազմում է 2 միլիարդ 46 միլիոն դրամ): Կապալառու՝ Ախուրյան Կոպշին ՍՊԸ:

➢ Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց 9/10 հասցեի հողամասում բնակելի համալիրի կառուցում- 311 բնակարան՝ 2023 թվականին իրականացվել են շուրջ 1 միլիարդ դրամի աշխատանքներ: Շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են: Ավարտը՝ 2024 թվական: Պատվիրատու՝ Դ Ընդ Էդ Ինվեստ Գրուպ ՍՊԸ:

➢ Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցի N 9/5 հասցեում գտնվող բնակելի համալիրի կառուցում -96 բնակարան՝ 2023 թվականին իրականացվել են շուրջ 1 միլիարդ դրամի աշխատանքներ: Շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են: Ավարտը՝ 2024 թվական:

Պատվիրատու՝ Նյու Էյջ Քոնստրաքշն ՍՊԸ:

➢ Գյումրի քաղաքում Անի և Ավստրիական թաղամասերի հարևանությամբ «Ամերիկյան թաղամաս» էկովանի կառուցմում-50 բնակարան, 2023 թվականին իրականացվել են շուրջ 600.0 մլն. դրամի աշխատանքներ: Շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են: Ավարտը՝ 2024 թվական:

2. Թվով 11 կրթական և թվով 1 մարզական օբյեկտներ -3 միլիարդ 106 միլիոն 288 հազար դրամ

➢ ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բերդաշեն բնակավայրի «Բերդաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի կառուցում ծրագրի արժեքը շուրջ 717 միլիոն 631 հազար դրամ: Կառուցման աշխատանքները մեկնարկել են 2020 թվականին: 2023 թվականի ՀՀ պետական բյուջեով հատկացվել է 264 միլիոն 958 հազար դրամ գումար: 2023 թվականի ընթացքում իրականացվել են **110 միլիոն 501** հազար դրամի աշխատանքներ: 2024 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 276 միլիոն 712 հազար դրամի գումար շինարարական աշխատանքներ իրականացնելու համար և ևս 50 միլիոն դրամ գումար՝ գույքի ձեռք բերման համար: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2025 թվականին: Կապալառու՝ Վանի ՍՊԸ: Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե:

➢ ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի «Արեգնադեմի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի կառուցում ծրագրի արժեքը 748 միլիոն 541 հազար դրամ): Կառուցման աշխատանքները մեկնարկել են 2021 թվականին: 2023 թվականի ՀՀ պետական բյուջեով հատկացվել է 205 միլիոն 847 հազար դրամ գումար, որից իրականացվել են **205 միլիոն 192 հազար** դրամի աշխատանքներ: 2024 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 390 միլիոն 485 հազար դրամի գումար և ևս 50 միլիոն դրամ գումար գույքի ձեռք բերման համար: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2024 թվականին: Կապալառու՝ Տ-Քնսթրաքշն ՍՊԸ: Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե:

➢ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Կապսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի կառուցում ծրագրի արժեքը 733 միլիոն 250 հազար դրամ): Կառուցման աշխատանքները մեկնարկել են 2021 թվականին: 2023 թվականի ՀՀ պետական բյուջեով հատկացվել է 285 միլիոն 162 հազար դրամ, որից իրականացվել են **248 միլիոն 462** հազար դրամի աշխատանքներ: 2024 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 15 միլիոն 499 հազար դրամ գումար գույքի ձեռք բերման համար: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2024 թվականին: Կապալառու՝ Ինտերեվրոս ՍՊԸ: Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե:

➢ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Արթիկի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի կառուցում ծրագրի արժեքը 1 միլիարդ 521 միլիոն 520 հազար դրամ):Կառուցման աշխատանքները մեկնարկել են 2021 թվականին: 2023 թվականին իրականացվել 248 միլիոն 462 հազար դրամի աշխատանքներ: 2024 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 458 միլիոն 831 հազար դրամ գումար: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2024 թվականին: Կապալառու՝ Արհովշին ՍՊԸ: Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ:

➢ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան բնակավայրի «Ազատանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի կառուցում ծրագրի արժեքը 1 միլիարդ 585 միլիոն դրամ): Կառուցման աշխատանքները մեկնարկել են 2021 թվականին: 2023 թվականին իրականացվել են **415 միլիոն 750 հազար** դրամի աշխատանքներ: 2024 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 458 միլիոն 831 հազար դրամ գումար: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2024 թվականին: Կապալառու՝ Արհովշին ՍՊԸ: Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ:

➢ Գյումրիի թիվ 1 ավագ դպրոցի պատշգամբի և մարզադահլիճի վերանորոգում ծրագրի արժեքը 49 միլիոն 422 հազար դրամ): Կառուցման աշխատանքները մեկնարկել են 2023 թվականին: 2023 թվականին իրականացվել են **49 միլիոն 299** հազար դրամի աշխատանքներ: 2024 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 122 հազար 855 դրամ գումար: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2024 թվականին: Կապալառու՝ Գոհարիկ ՍՊԸ: Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ:

➢ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ մարզում շարունակվում են թվով 3 մանկապարտեզների շենքերի կառուցման աշխատանքները ծրագրի արժեքը 853 միլիոն 890 հազար դրամ: 2023 թվականին իրականացվել են **215 միլիոն 113** հազար դրամի աշխատանքներ:

- ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Զանգակ մանկապարտեզի շենքի կառուցում ծրագրի արժեքը 208 միլիոն դրամ: Կառուցման աշխատանքները մեկնարկել են 2021 թվականին: 2023 թվականին իրականացվել են 71 միլիոն 870 հազար դրամի աշխատանքներ: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2024 թվականին: 2024 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 55 միլիոն 27 հազար դրամ գումար: Կապալառու՝ ԱՐՍԵՎ ՍՊԸ:
- ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի Հոռոմ բնակավայրի մանկապարտեզի շենքի կառուցում ծրագրի արժեքը 186 միլիոն 533 հազար դրամ: Կառուցման աշխատանքները մեկնարկել են 2021 թվականին: 2023 թվականին իրականացվել են 64 միլիոն 693 հազար դրամի աշխատանքներ: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2024 թվականին: 2024 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 55 միլիոն 27 հազար դրամ գումար: Կապալառու՝ «ԱՐՍԵՎ» ՍՊԸ:
- ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի Նոր Կյանք բնակավայրի մանկապարտեզի շենքի կառուցում ծրագրի արժեքը 459 միլիոն 357 հազար դրամ: Կառուցման աշխատանքները մեկնարկել են 2023 թվականին: 2023 թվականին իրականացվել են 78 միլիոն 550 հազար դրամի աշխատանքներ: 2024 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 250 միլիոն դրամ գումար: Շինարարական աշխատանքները

նախատեսվում է ավարտել 2025 թվականին: Կապալառու՝ Անդրեաս և ընկերներ ՍՊԸ:

➢ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի շենքի կառուցում ծրագրի արժեքը 793 միլիոն 883 հազար դրամ: Կառուցման աշխատանքները մեկնարկել են 2023 թվականին: 2023 թվականի ՀՀ պետական բյուջեով հատկացվել է 52 միլիոն 368 հազար դրամ գումար, որից իրականացվել են **50 միլիոն** դրամի աշխատանքներ: 2024 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 296 միլիոն 606 հազար դրամ գումար: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2025-2026 թվականներին: Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե:

➢ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արևշատ բնակավայրի «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի շենքի կառուցում ծրագրի արժեքը 813 միլիոն 971 հազար դրամ: Կառուցման աշխատանքները մեկնարկել են 2023 թվականին: 2023 թվականի ՀՀ պետական բյուջեով հատկացվել է 52 միլիոն 306 հազար դրամ գումար, որից իրականացվել են **50 միլիոն դրամի** աշխատանքներ: 2024 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 304 միլիոն 666 հազար դրամ գումար: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2025-2026 թվականներին: Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե:

➢ Շարունակվում է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Արթուր Ալեքսանյանի անվան հունա-հռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան դպրոց» ՀՈԱԿ-ի շենքի կառուցման աշխատանքները ծրագրի արժեքը 6 միլիարդ 436 միլիոն 350 հազար դրամ: Կառուցման աշխատանքները մեկնարկել են 2021 թվականին: 2023 թվականի ՀՀ պետական բյուջեով հատկացվել է 1 միլիարդ 296 միլիոն 551 հազար դրամ գումար, որից իրականացվել են **1 միլիարդ 289 միլիոն 99** հազար դրամի աշխատանքներ: 2024 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 1 միլիարդ 534 միլիոն 688 հազար դրամ գումար: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2026 թվականին: Պատվիրատու՝ Քաղաքաշինության կոմիտե:

3. Նախագծային աշխատանքներ -196 միլիոն 206 հազար դրամ

➢ ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքում նոր բնակելի թաղամասի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ (արժեքը 29 միլիոն 470 հազար դրամ): Փաստաթղթերի մշակման աշխատանքները գտնվում են ավարտական փուլում:

➢ Շարունակվում են ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները (արժեքը՝ 6 միլիոն 600 հազար դրամ): Փաստաթղթերի մշակման աշխատանքները գտնվում են ավարտական փուլում:

➢ Մարզի թվով 18 կրթական հաստատությունների շենքային պայմանների բարելավման նպատակով (ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի N 1140-Ն որոշում) նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ (արժեքը 136 միլիոն 250 հազար դրամ):

➢ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Գյումրու մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՊՈԱԿ-ի շենքի նախագծահետազոտական, գեոդեզիաքարտեզագրական աշխատանքներ (արժեքը՝ 23 միլիոն 890 հազար դրամ):

4. Մասնավոր ներդրողներ- 2 միլիարդ 50 միլիոն դրամի կապիտալ ներդրումներ

➢ Անհատական բնակելի և հասարակական շենքերի կառուցում (2023 թվականին կապիտալ ներդրումների ծավալը կազմել է շուրջ 1 միլիարդ դրամ):

➢ Ընթացքի մեջ են Գյումրի քաղաքի օդանավակայանի մեկնման սրահի ընդլայնման աշխատանքերը (ներդրումների ընդհանուր ծավալը շուրջ 500 միլիոն դրամ գումար է):

➢ «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ-ի ծննդատան կառուցման աշխատանքներն ընթացքի մեջ են (ընդհանուր արժեքը կազմում է 650,0 միլիոն դրամ, մինչ օրս իրականացվել է 550,0 միլիոն դրամի աշխատանքներ):

5. Անհետաձգելի համարվող կապիտալ բնույթի ծրագրեր- 609 միլիոն 948 հազար դրամ

➢ ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 6-ի № 498-Ն որոշմամբ հատկացված միջոցներով իրականացվում են ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Արթիկի թիվ 3 մանկապարտեզ» և «Արթիկի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ների շենքերի վերանորոգման աշխատանքներ: 2023 թվականի ՀՀ պետական բյուջեով հատկացվել է 466 միլիոն 912 հազար դրամ գումար, որից իրականացվել են **369 միլիոն 684 հազար** դրամ գումարի աշխատանքներ: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2024 թվականին: Կապալառու՝ Այ Քոնսթրաքշն ՍՊԸ: Պատվիրատու՝ Արթիկի համայնքապետարան:

➢ ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 6-ի № 498-Ն որոշմամբ հատկացված միջոցներով իրականացվել են «Վարդան Աճեմյանի անվան դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ի շենքի արտաքին պատուհանների փոխարինման աշխատանքներ (ծրագրի արժեքը **34 միլիոն 678 հազար դ**րամ): Շինարարական աշխատանքներն ավարտվել են: Կապալառու՝ ԿԻՐ-ՔԱՐ ՍՊԸ:

➢ ՀՀ կառավարության 2023 թվականի օգոստոսի 17-ի № 1390-Ն որոշմամբ հատկացված միջոցներով իրականացվել են ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրակ մարզադաշտի արևմտյան կողմի տարածքի հիմնանորոգման (հատված կմ 0+000-0-199) աշխատանքներ: 2023 թվականի ՀՀ պետական բյուջեով հատկացվել է 66 միլիոն 417 հազար դրամ գումար, որից 2023 թվականին իրականացվել են **58 միլիոն 939** հազար դրամի աշխատանքներ: Հիմնանորոգման աշխատանքներն ավարտվել են: Կապալառու՝ Մերձմոսկովյան ԲԲԸ: Պատվիրատու՝ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ:

➢ ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 9-ի № 1954-Ն որոշմամբ հատկացված միջոցներով իրականացվել են ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի Լմբատ 1-ին և Լմբատ 2-րդ թաղամասերի դիտահորերի փոխարինման և նորոգման աշխատանքներ: Ծրագրի արժեքը կազմել է **30 միլիոն 21** հազար դրամ գումար: Վերանորոգման աշխատանքներն ավարտվել են: Կապալառու՝ Նոր ԳՐՈՒՊ ՍՊԸ: Պատվիրատու՝ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ:

➢ ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 14-ի 2202-Ն որոշմամբ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմին հատկացվել է **115 միլիոն 926** հազար դրամ մարզի 4 դպրոցների շենքերի նորոգման համար տանիք, հատակներ, պատուհաններ:

- «Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի մասնակի տանիք, հատակներ, պատուհաններ վերանորոգում (ծրագրի արժեքը կազմում է 36 միլիոն 846 հազար դրամ):
- «Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոց» ՊՈԱԿ-ի ջեռուցման համակարգի վերակառուցում և շենքի մասնակի վերանորոգում (ծրագրի արժեքը կազմում է 33 միլիոն 296 հազար դրամ գումար):
- «Գյումրու թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի բակային հետնամասի քարե պարսպի կառուցում (ծրագրի արժեքը կազմում է 24 միլիոն 929 հազար դրամ գումար):
- «Լանջիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ջեռուցման համակարգի վերակառուցում (ծրագրի արժեքը կազմում է 20 միլիոն 855 հազար դրամ գումար):

• ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզի համայնքների ղեկավարների կողմից 2023 թվականի ընթացքում բնակարանային հաշվառման է վերցվել թվով 1 նախկին զինծառայողի ընտանիք: Նախորդ տարիների ընթացքում իրականացված բնակարանային բարելավման ծրագրերի շրջանակներում բնակարան ձեռք բերած կամ այլ պատճառներով ծրագրի շահառու չհամարվող թվով 7 ընտանիքներ հանվել են բնակարանային հաշվառումից:

Այս պահի դրությամբ ՀՀ Շիրակի մարզի բնակավայրերում հաշվառված են նախկին զինծառայողների թվով 123 ընտանիքներ (այդ թվում՝ զոհված-36, հաշմանդամ-87): Նշված ընտանիքներից 13-ի (այդ թվում 2022թ.՝ 5 բնակ.գործ, 2023թ.՝ 8 բնակ.գործ) բնակարանային գործերն ուղարկվել են ՀՀ պաշտպանության նախարարության բնակարանային հարցերի հանձնաժողովի քննարկմանը:

• ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 20-ի N1658-Ա որոշման համաձայն ՀՀ Շիրակի մարզում 2022 թվականի հոկտեմբեր ամսվա դրությամբ փաստագրված էին թվով 3416 հիմնական շինություններ: ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի N1601-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ համայնքների ղեկավարների կողմից լրամշակվել և 2023 թվականի փետրվարի 1-ի դրությամբ հաստատվել են բնակավայրերում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում տեղադրված ոչ հիմնական շինությունների ցուցակները, որոնք ուղարկվել են ՀՀ քաղաքաշինության կոմիտե: Նշված ցուցակներում փաստագրված են 2964 ոչ հիմնական շինություններ, որից

	Համայնք	Քանակը		Տարբերությունը
		18.10.2022թ. դրությամբ	01.02.2023թ. դրությամբ	
1	Գյումրի	2744	2648	96
2	Արթիկ	23	2	21
3	Ախուրյան	587	295	292

4	Անի	37	6	31
5	Ամասիա	19	13	6
6	Աշոցք	6	0	6
Ընդամենը		3416	2964	452

2023 թվականի ընթացքում մարզում ապամոնտաժվել, սեփականաշնորհվել կամ հանձնվել է համայնքին թվով 80 ոչ հիմնական շինություն (այդ թվում ապամոնտաժված -50 տնակ (Գյումրի), սեփականաշնորհված – 25 տնակ (Գյումրի -22, Ախուրյան -3), համայնքին են հանձնվել – 3 տնակ (Գյումրի), կացարանի զբաղեցրած տարածքը սեփականաշնորհված է - 2 (Գյումրի)):

2024 թվականի հունվարի 24-ի դրությամբ ոչ հիմնական շինությունների քանակը կազմում է 2884: Ոչ հիմնական շինությունների ապամոնտաժման և դրանցում բնակվող ընտանիքների վերաբնակեցմանն ուղղված աշխատանքները շարունակվում են:

- ՀՀ Շիրակի մարզի համայնքներում 2008 թվականի դրությամբ հաստատված երկրաշարժից անօթևան մնացած ընտանիքների հերթացուցակներում հաշվառված և տարբեր պատճառներով բնակարանային փոխհատուցում չստացած ընտանիքների քանակը 2022 թվականի դեկտեմբերի 7-ի դրությամբ կատարված վերլուծության արդյունքում կազմել է 1311 ընտանիք, որից՝ ք.Գյումրի-1084, այլ բնակավայրեր-227:

ՀՀ վարչապետի հանձնարարությամբ 2023 թվականի սեպտեմբեր ամսին համայնքների ղեկավարների կողմից տարվել են աշխատանքներ 2008 թվականի դրությամբ հաստատված երկրաշարժից անօթևան մնացած ընտանիքների հերթացուցակների ճշգրտման ուղղությամբ: 2023 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ ճշգրտված տվյալներով մարզում երկրաշարժից անօթևան մնացած ընտանիքների հերթացուցակներում դեռևս հաշվառված են 1227 ընտանիքներ, որից՝ ք.Գյումրի-1016 ընտանիք, այլ բնակաբայրեր-211 ընտանիք: 2022 թվականի համեմատությամբ անօթևանների քանակը նվազել է 84-ով, որից 56-ը մահացած քաղաքացիներ են, իսկ 28-ը՝ բնակարանային ապահովման տարբեր ծրագրերով բնակարանային փոխհատուցում ստացած ընտանիքներ:

- ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի N1004-Ն որոշմամբ հատկացված 15,581 մլն դրամ գումարի շրջանակներում ավատվել են ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տիգրան Մեծ N5 շենքի անբավարար տեխնիկական վիճակում գտնվող թվով 3 մուտքերի ուժեղացման-վերականգնման (ամրացման) նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման աշխատանքները: Օբյեկտի նախահաշվային արժեքը կազմում է 752,85 մլն դրամ գումար: «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն 2023 թվականի հուլիսի 4-ին կայացել է մրցութ, որի արդյունքում Տիգրան Մեծ N5 շենքի անբավարար տեխնիկական վիճակում գտնվող թվով 3 մուտքերի ուժեղացման-վերականգնման (ամրացման) աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ գումարի չափը կազմում է 732 074 346,00 ՀՀ դրամ: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին ներկայացվել է առաջարկություն նախատեսված շինարարական աշխատանքները մեկնարկելու նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացնելու վերաբերյալ:

- Գյումրի քաղաքի Անտառավան 3 թաղ. 26 վթարային շենքում փաստացի բնակվող թվով 10 ընտանիքների բնակարանային խնդիրը լուծելու նպատակով շրջանառվել է ՀՀ կառավարության որոշման նախագիծ, ըստ որի նախատեսվում է այդ ընտանիքներին

տրամադրել բնակարանի գնման վկայագրեր: Նշված ծրագրի արդյունավետությունն ապահովվելու նպատակով մեր կողմից առաջարկվել է բնակարանի գնման վկայագրերի տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագիրը նախատեսել վթարային շենքի բոլոր թվով 58 բնակարանների բնակիչների համար: Նախագիծը ՀՀ կառավարությունում գտնվում է քննարկման փուլում:

• ՀՀ Շիրակի մարզի բնակավայրերում բնակ.ապահովման իրավունքը դատական կարգով վերականգնած թվով 7 ընտանիքներ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի համապատասխան հրամաններով ճանաչվել են բնակարանային ապահովման ծրագրի շահառուներ (ք.Գյումրի-2, գ.Ախուրյան-1, գ.Ջաջուռ-1, գ.Բասեն-2, գ.Կառնուտ-1): ՀՀ կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի N1006-Ն որոշման 6-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին առաջարկվել է նշված ընտանիքներին բնակարանի գնման վկայագիր տրամադրելու նպատակով համապատասխան գումար հատկացնել ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմին:

• ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի N1666-Ն որոշմամբ 1988-1992թթ. Ադրբեջանից բռնագաղթած, ՀՀ քաղաքացիություն ստացած և ՀՀ Շիրակի մարզի բնակավայրերում ժամանակավոր կացարաններում բնակվող թվով 7 ընտանիքների (ք.Գյումրի-6, գ.Հոռոմ-2) տրամադրվել են բնակարանի գնման վկայագրեր բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու նպատակով: Նշված ընտանիքներից 1-ն արդեն իսկ ձեռք է բերել բնակարան: Գործընթացը շարունակվում է:

• «Ջրային ռեսուրսների համատեղված կառավարում/ Ախուրյան գետ, փուլ 1» ծրագրով նախատեսվում է վերականգնել և ավարտին հասցնել Կապսի ջրամբարի կառուցման աշխատանքները, ինչպես նաև նոր գյուղի կառուցմամբ իրականացնել Ջրաձոր գյուղի վերաբնակեցումը:

Ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցման աշխատանքներն իրականացվելու են 2 փուլով: Առաջին փուլում ապահովվելու է մոտ 19400 հա գյուղատնտեսական և մոտ 4600 հա ոչ ոռոգելի հողերի ոռոգումը: Առաջին փուլի արդյունքում Ջրամբարի հզորությունը նախատեսվում է հասցնել 25 միլիոն մ³-ի: Երկրորդ փուլով նախատեսվում է բարձրացնել Կապսի պատվարի մակարդակը և ջրամբարի պահեստավորման հնարավորությունը հասցնել մինչև 60 միլիոն մ³-ի: Կառուցվելու են նաև լրացուցիչ խողովակաշարեր և փոխադրման համակարգեր դեպի Թալին -Արմավիրի տարածաշրջան, որը թույլ կտա ոռոգել ևս 7000 հա տարածք:

Ծրագրի շրջանակում վերաբնակեցվելու է Ջրաձոր գյուղն ամբողջությամբ՝ նոր գյուղի կառուցման տարբերակով, վերաբնակեցման ենթակա ազդակիր ընտանիքների թիվը 76 է: Նոր գյուղը լինելու է ժամանակակից լուծումներով: Այն ունենալու է գլխավոր հատակագիծ, ներառելու է բնակելի, հանգստի, արտադրական և ուսումնական գոտիներ:

Գույքագրվել են Ջրաձոր բնակավայրի ներկայիս բոլոր տներն ու շինությունները և մեկնարկել են նոր գյուղի նախագծման աշխատանքները:

Նոր գյուղի կառուցման աշխատանքներին իրականացնելու համար նախատեսված է 4 միլիարդ 950 հազար դրամ գումար (ՀՀ պետական բյուջեով 2023-2024 թվականներին այդ նպատակի համար գումարներ չկան հատկացված):

Ջրամբարի և օժանդակ կառուցվածքների կառուցման աշխատանքներն իրականացնելու համար նախատեսված է ընդհանուրը 31 միլիարդ 506 միլիոն 78 հազար

դրամ գումար: Կապալառու կազմակերպության հետ կնքվել է պայմանագիր, շինարարական աշխատանքները մեկնարկել են: 2023 թվականի ընթացքում իրականացվել են 5 միլիարդ 298 միլիոն 230 հազար դրամի աշխատանքներ: 2024 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 8 միլիարդ 544 միլիոն 502 հազար դրամ գումար: Շինարարական աշխատանքներն իրականացնում է չինական «Շանսի Քոնսթրաքշն Ինվեսթմենթ Գրուպ Կո» և «Շանսի Հայդրոլիկ Քոնսթրաքշն Ինջինիրինգ Բյուրո» համատեղ ձեռնարկությունը:

Հողաշինության ոլորտ

1. Հողային հաշվեկշռի կազմման աշխատանքներ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թ. հոկտեմբերի 23-ի <<Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին>> թիվ 656 որոշմամբ սահմանված կարգով ուսումնասիրվել են 01.07.2023 թ. դրությամբ մարզի համայնքների կողմից կազմված հողային հաշվեկշիռները, դրանց ամփոփման արդյունքում կազմվել է մարզի հողային հաշվեկշիռը, այն համաձայնեցվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ և սահմանված ժամկետում ներկայացվել է ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:

Վերջինիս կողմից մարզի հողային հաշվեկշռի վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

Ըստ 2023 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմվող մարզի հողային հաշվեկշռի, մարզի համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի կազմում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել: **Նախորդ տարվա համեմատությամբ գյուղատնտեսական նշանակության հողերը պակասել են շուրջ 21.41 հա-ով,** որից՝ 1.025 հեկտարը անցել է բնակավայրերի նպատակային նշանակության հողերի, 1.69 հեկտարը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության և 18.7 հեկտարը՝ էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողերի կատեգորիա:

2.Հողերի օտարում, վարձակալության տրամադրում

2023 թվականի ընթացքում մարզի թվով **6** համայնքներում իրականացված հողերի աճուրդային վաճառքի արդյունքում օտարվել է ընդամենը **29.94 հա** համայնքային սեփականություն հանդիսացող հող: Վաճառքի արդյունքում ձևավորված գումարը կազմել է **318 մլն 211 հազ. դրամ**: Ապահովվել է ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված նվազագույն մեկնարկային արժեքի նկատմամբ բարձր մակարդակ: **2022 թվականին** նույն ժամանակահատվածում օտարվել է համայնքային սեփականություն հանդիսացող **16.29 հա** հող՝ **157 մլն 133 հազ. դրամ** գումարով, այսինքն՝ նախորդ տարվա համամեատ ավել է օտարվել **13.65 հա** համայնքային սեփականություն հանդիսացող հող՝ **161 մլն 78 հազ. դրամ** գումարով: Իսկ ուղղակի վաճառքով, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, օտարվել է **6.11 հա** հող՝ **104 մլն 460 հազ. դրամ** արժեքով: **2022 թվականին** նույն ժամանակահատվածում օտարվել է համայնքային սեփականություն հանդիսացող **6.19** հա հող՝ **37 մլն 517 հազ. դրամ** արժեքով: Նախորդ տարվա համեմատ պակաս է օտարվել **0.08** հա հող, սակայն օտարման արդյունքում ձևավորված գումարը **66 մլն 943 հազ. դրամով** ավել է:

2023 թվականի ընթացքում մարզի թվով **6** համայնքներում անցկացված հողերի վարձակալության տրամադրման մրցույթների արդյունքում վարձակալության է տրամադրվել **188.8 հա** համայնքային սեփականություն հանդիսացող հողեր՝ **4 մլն. 091 հազ. դրամ** վարձավճարով: Ապահովվել է օգտագործման տրամադրված հողամասերի հողի հարկի դրույքաչափի նկատմամբ վարձավճարի բարձր մակարդակ:

2022 թվականին նույն ժամանակահատվածում օգտագործման է տրամադրվել համայնքային սեփականություն հանդիսացող ընդամենը **53.42 հա** հող, տարեկան **4 մլն 482 հազ. դրամ** վարձավճարով: Այսինքն նախորդ տարվա համեմատ ավել է օգտագործման տրամադրվել **135.38 հա** հողամաս:

Ապահովել է օտարված և վարձակալության տրամադրված հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցումները:

3.Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ, նպատակային նշանակության փոփոխություններ

Հաշվետու ժամանակահատվածում հաստատված գլխավոր հատակագիծ չունեցող մարզի թվով 2 համայնքների կողմից սահմանված կարգով կազմվել և ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ են ներկայացվել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում հողամասերի նպատակային նշանակությունները փոփոխելու նպատակով կազմված 2 ժամանակավոր սխեմաներ և դրանց անբաժանելի մասը հանդիսացող հողաշինարարական գործեր, որոնք քննարկվել են հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքները համակարգող Շիրակի մարզային հանձնաժողովի կողմից և դրական եզրակացություններով ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու նպատակով կազմված և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացված նշված 2 հողաշինարարական գործերի համաձայնեցման աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են:

2023 թվականի ընթացքում մարզպետի աշխատակազմի կողմից Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողով ներկայացված հողաշինարարական գործերի վերաբերյալ բացասական եզրակացություն չի ստացվել:

Հաշվետու ժամանակահատվածում՝ ՀՀ Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն, մարզի թվով 6 համայքների կողմից կազմվել և ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ են ներկայացվել հողամասերի նպատակային նշանակությունները փոփոխելու համար կազմված թվով **23** հողաշինարարական փաթեթներ, որոնք սահմանված կարգով ուսումնասիրվել և համապատասխան եզրակացությամբ ներկայացվել են ՀՀ Քաղաքաշինության կոմիտե: Վերը նշված փաթեթներից թվով **9**-ի վերաբերյալ ստացվել են դրական եզրակացություններ, թվով **14** հողաշինական փաթեթների համաձայնեցման աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են: **Բացասական եզրակացություն ոչ մի փաթեթի վերաբերյալ չի ներկայացվել:**

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Ոլորտ	2022թ.	2023թ.	Աճը 2022 թվականի համեմատ
Ճանապարհաշինություն	7.8 մլրդ. դրամ	10.1 մլրդ դրամ	29,5 %

ՀՀ Շիրակի մարզն ունի շուրջ 858,5 կմ երկարությամբ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ, որից միջպետական նշանակության՝ 114.2կմ, հանրապետական նշանակության՝ 247,9 կմ և մարզային (տեղական) նշանակության՝ 496,4 կմ:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պատվիրատվությամբ մարզում իրականացվում են թվով 8 ճանապարհաշինական ծրագրեր, որից 6-ը՝ 49.9 կմ երկարությամբ շուրջ 5.0 միլիարդ դրամ գումարի շրջանակներում գտնվում են ավարտական փուլում: Եվս 2 ճանապարհաշինական ծրագրերի՝ 15.9 կմ երկարությամբ շուրջ 2.3 միլիարդ դրամ գումարի շրջանակներում, ավարտը նախատեսվում է 2024 թվականին:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ մարզում իրականացվում են թվով 6 ճանապարհաշինական ծրագրեր՝ 7.6 կմ երկարությամբ շուրջ 2.8 միլիարդ դրամ գումարով: Աշխատանքներն ընթացքի մեջ են:

Համեմատելով 2022 թվականի ճանապարհաշինության ցուցանիշները 2023 թվականի ցուցանիշների հետ ստացվում է հետևյալ պատկերը՝ 2022թ. 65.93 կմ- 7.8 միլիարդ դրամ, 2023թ. 73.4 կմ-10.1 միլիարդ դրամ:

Շարունակվում են նաև Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման վարկային ծրագիր՝ Տրանշ 3 Լանջիկ Գյումրի 23.0 կմ երկարությամբ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի կառուցման աշխատանքները: